«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«24» նոյեմբերի 2014թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

Ն ԳԲԽ-37/14 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ու Թ Յ Ու Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. Ն 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Կոնսէլ» ՍՊԸ-ի 07.11.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 07.11.2014թ. ներկայացրած բողոքում «Կոնսէլ» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) նշել է, որ ս.թ. հոկտեմբերի 22-ին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի կարիքների համար անհրաժեշտ կենցաղային և էլեկտրական սարքեր ու սարքավորումներ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-

ՇՀԱՊՁԲ-11/12(14)-1» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որի 6-րդ չափաբաժնով նախատեսված՝ ռենտգենային հսկողության սարք ապրանքատեսակի մասով, տեխնիկական բնութագիրը սահմանվել է ոչ լիարժեք և չի մատնանշվել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 13-րդ կետի 5-րդ և 6-րդ ենթակետերով լիցենզավորման ենթակա գործունեության համար սահմանված լիցենզիայի առկայության անհրաժեշտության պահանջը:

Ընկերությունը բողոքում հայտնել է, որ Պատվիրատուն խախտել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթը, քանի որ Ընկերությանը չի տրամադրվել հայտերի բացման նիստի արձանագրության պատճենը:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուն խախտել է նաև ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 30-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված պահանջը, քանի որ գնման հայտով չի նախատեսվել վերը նշված սարքի փոխադրման, մոնտաժման և կարգաբերման հետ կապված լիցենզիայի առկայության պահանջը:

Բողոքաբերը խնդրել է չեղյալ համարել Ընթացակարգը՝ 6-րդ չափաբաժնի մասով:

«Կոնսէլ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-37/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, 13.11.2014թ. ժամը 15:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին չի ներկայացել, սակայն նույն օրը դիմում է ներկայացրել Կենտրոնին՝ խնդրելով Ընկերության 07.11.2014թ. ներկայացրած բողոքը թողնել առանց քննության:

2. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ԳԲԽ-37/14 բողոքը քննող հանձնաժողովի նիստի օրվա և ժամի մասին, 13.11.2014թ. ժամը 15:00-ին նշանակված հանձնաժողովի նիստին նույնպես չի ներկայացել և 17.11.2014թ. Ե 40/11-3521 գրությամբ

«Կոնսէլ» ՍՊԸ-ի ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ 22.10.2014թ. գնման ընթացակարգ է հրապարակվել www.armeps.am կայքում, որտեղ գրանցված են «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12» ծածկագրով շրջանակային համաձայնագիր կնքած բոլոր հնարավոր մասնակիցները, իսկ հրավերը հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական կայքում: Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը բացվել են 2014 թվականի նոյեմբերի 3-ին, ժամը՝ 11:00-ին www.armeps.am կայքի միջոցով:

Գնահատման փուլում պարզվել է, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի գնահատման արդյունքները www.armeps.am համակարգը ավտոմատ կերպով գնահատել է անբավարար (դիմումը և գնային առաջարկը բացակայել են), ինչի արդյունքում հանձնաժողովը որոշել է «Կոնսէլ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ճանաչել անվավեր:

Պատվիրատուն վերոնշյալ գրությամբ Կենտրոն է ներկայացրել Ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի պատճենները:

Ի լրումն 17.11.2014թ. Ե 40/11-3521 գրության՝ Պատվիրատուն 24.11.2014թ. N 40/11-3717 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընթացակարգի հրավերին կից տեխնիկական բնութագրում 6-րդ չափաբաժնի մասով տեղի է ունեցել վրիպակ, բացթողում, մասնավորապես, չի նշվել մատակարարի կողմից ռենտգեն հսկողության սարքի մոնտաժման, կարգաբերման և փոխադրման հետ կապված գործողությունների լիցենզավորման պահանջը՝ համաձայն «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի:

Պատվիրատուն վերը նշված գրությամբ հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2014թ. N 3 արձանագրության 1.3.1 կետով որոշում է կայացվել 6-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

Միաժամանակ 24.11.2014թ. N 40/11-3717 գրությամբ Պատվիրատուն խնդրել է ընդունել ի գիտություն այն հանգամանքը, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական վարչության պետի 20.11.2014թ. N 216-Լ հրամանով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կազմում տեղի է ունեցել փոփոխություն՝ հանձնաժողովի նախագահ Վ.Նավիկյանի փոխարեն հանձնաժողովի կազմում որպես հանձնաժողովի նախագահ է ընդգրկվել Վ.Մելքոնյանը:

Պատվիրատուն 24.11.2014թ. N 40/11-3717 գրությամբ Կենտրոն է ներկայացրել Ընթացակարգը 6-րդ չափաբաժնի մասով չկայացած համարելու որոշման մասին

հայտարարության, գնահատող հանձնաժողովի 21.11.2014թ. N 3 արձանագրության օրինակները և գնահատող հանձնաժողովի կազմում փոփոխություն կատարելու մասին ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության պետի 20.11.2014թ. N 216-Լ հրամանի պատճենը:

3. ԳԲԽ-37/14 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Կոնսէլ» ՍՊԸ-ի 07.11.2014թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, Ընկերության 13.11.2014թ. դիմումը, ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության 17.11.2014թ. Ե 40/11-3521 և 24.11.2014թ. N 40/11-3717 գրությունները և կից ներկայացված փաստաթղթերը, հայտնում է հետևյալը.

ԳԲԽ-37/14 բողոքի քննության համար նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական վարչության կողմից ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի կարիքների համար անհրաժեշտ էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել է «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12(14)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերին կից կենցաղային և էլեկտրական սարքավորումների գնման «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12(14)-1» պայմանագրի նախագծի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրի 6-րդ չափաբաժնով, նախատեսվել է պայմանագրով սահմանված ծավալով, ձևով և ժամկետում Պատվիրատուին հանձնել և վերջինիս մոտ տեղադրել «NUCTECH™CX6040BI» տեսակի կամ համարժեք ռենտգեն հսկողության սարք:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2014թ. ժամը 11:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1.3.1 կետով որոշում է կայացվել Ընթացակարգի 6-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարել չկայացած:

4. ԳԲԽ-37/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումը և եզրահանգումը

«Կոնսէլ» ՍՊԸ-ն 07.11.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով խնդրել է չեղյալ համարել Պատվիրատուի կողմից ՀՀ ԱՆ «Արմավիր» ՔԿ հիմնարկի կարիքների համար անհրաժեշտ էլեկտրատեխնիկա, ռադիոտեխնիկա և կենցաղային սարքավորումներ ձեռք բերելու նպատակով կազմակերպված «ԳԱԿ-ՇՀԱՊՁԲ-11/12(14)-1» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը՝ 6-րդ չափաբաժնի մասով: Սակայն, բողոքի քննության ընթացքում Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 21.11.2014թ. N 3 արձանագրության 1.3.1 կետով կայացրած որոշմամբ 6-րդ չափաբաժնի մասով գնման ընթացակարգը հայտարարվել է չկայացած:

Նկատի ունենալով, որ «Կոնսէլ» ՍՊԸ-ի 07.11.2014թ. ներկայացրած բողոքն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կայացրած վերոնշյալ որոշման առկայության պայմաններում դարձել է առարկայազուրկ, առաջարկում ենք Ընկերության 07.11.2014թ. բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ — Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ — Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ — Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ԳԲԽ-37/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար — Ա. Գրիգորյան